

տագանցներէ եկածը: Այսպիսիներ իրենց ար-
գահատելի կացութեամբն իսկ՝ գուցէ չեն ուրա-
նար գերազանցութիւնն ու սրբութիւնը այն
վիճակին զոր կորուսին, մինչ Տէր Հօր պէս
ասլոգներ գայն կ'անարգեն ու կը վարկաբեկեն
իբր քաջամարտիկ ախոյեաններ ամուսնութեան
խորհուրդին, որպէսզի ամէն Հայ վարդապետ-
ներ կարենան իրենց պէս վայելել սեռային հա-
ճոյքները՝ աշխարհականներու հաւատար իրա-
ւունքով: Ուրիշ կերպ կարելի չէ մեկնել այդ
անպատկառ ու հակասական բողոքը, որով թէ՛
եղած սայթաքումները կը մեղադրուին և թէ՛
կուսութեան աստուածային նուիրականութիւնը
կը մերժուի:

Ահա խնդրոյն բուն ցաւալի կէտը: Ահա-
տական գործերու համար ամէն մարդ անշուշտ
պատասխանատու է Աստուծոյ և իր խղճին առ-
ջեւ, բայց հրապարակային ճամարտակու-
թիւններն անհետեւանք չեն մնար, « իբրեւ ըզ-
թաղցկեղ ճարակ գտանեն », մանաւանդ եթէ
քարոզիչը սքեմի տակ ծածկուած մէկն է՝ որմէ
ծայր աստիճան գգուշաւորութիւն և սրբութիւն
կը պահանջէ Սուրբ Հոգին. « Երթունք քահա-
նայի գգուշասցին գիտութեան, զի հրեշտակ
Տեառն Ամենակալի է »:

Կը համարինք ունենալ առջեւնիս շուրջա-
ռակիր մը որ բոլորովին հաւատարաց մը չէ,
և քիչ շատ գիտակից՝ իրեն յանձնուած հոգի-
ներու փրկութեան պէտքին. արդ ի՞նչպէս չիւղ-
ճահարիլ ու չսարսափիլ նախատուած Աստուծոյ
մը սա սպանալիքէն. « Անօրէնն յանօրէնու-
մը սա սպանալիքէն. « Անօրէնն յանօրէնու-
մը սա սպանալիքէն »: Պահելով մեր բարեմիտ
ուսց քոց խնդրեցից »: Պահելով մեր բարեմիտ
ենթադրութիւնը անոր հաւատքի մասին, կը
ստիպուինք ուղղակի խօսիլ ու քիչ մ'աւելի
պարզել իր մտայնութեան արժէքը: « Քրիստո-
նէական Եկեղեցւոյ յաւիտեական արամ » է
Ձեզի համար, Տէր Հայր, սրբութեան և կատա-
րելութեան առաջնորդող այն գերամաքուր վի-
ճակը՝ զոր Աստուածային վարդապետը գործով
ու խօսքով նուիրագործեց, առաքելները դըր-
ուատեցին ու պատուիրեցին, Եկեղեցւոյ բոլոր
Ս. Հայրերը գայն ներբողեցին՝ իբր գերմարդ-
կային ու հրեշտակային կենցաղ, և որ Քրիս-
տոնէութեան սկիզբէն մինչեւ այսօր կը գործա-
դրուի երկու սեռէն ալ մաքրակենցաղ միլիոնաւոր
անհատներէ... Սկեպտիկ մը, զուլայական մը
անգամ պիտի չկարենար ձեր այդ դաւանանքն
հաստատել: Ապա թէ ոչ՝ Քրիստոս զուր տեղ
կոյս մայր մ'ընտրեց, կոյս աշակերտը սիրեց

և « են ներքինիք, ըսաւ, որ զանձինս իւրեանց
արարին ներքինիս վասն արքայութեան Աստու-
ծոյ »: — Պէտք չէ հաւատալ Պօղոս Առաքելին
սա խօսքին. « Եթէ որ այլ ազգ ինչ ուսուցանիցէ,
և ոչ անսայցէ ողջմտութեան բանից Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի, այնպիսին հպարտա-
ցեալ է և ոչինչ ոչ գիտէ »: — Դատարկ խօսք հա-
մարելու է նաեւ Յովհաննու Յայտնութեան մէջ
գրուածը. « Հարկանէին զքնարս իւրեանս և եր-
գէին զերգոս նորս... Սորա են որք ընդ կանայս
ոչ խառնակեցան, և են կուսանք... սորա ըն-
տրեցան ի մարդկանէ առաջի Աստուծոյ և Գա-
ռինն » են. — Ու վերջապէս ծիծաղելի մտայ-
նութեանց արդիւնք են՝ ինչպէս կը յայտարարէք
արդէն, Թեբայիդները և Հայաստանի ամայա-
ցած երբեմնի չէն վանքերն ու կրօնաստանները,
որոնց համար Դարականի մէջ կ'երգենք սա խօսքը՝
մեր Շնորհալի Հայրապետին սրտէն բխած. « Գի-
ղեցկացան անապատք մաքուր կուսութեամբ »:
Բայց այսչափով չի լինար ցնորաբանութիւն-
ներու շարքը: « Հակաբնական » է, կ'ըսէք, կու-
սակրօնութիւնը, յար և նման նիւթապաշտնե-
րուն՝ որոնք չեն ընդունիր, ի միջի այլոց, աս-
տուածային շնորհաց հօգօր օժանդակութիւնը:
Այս հրեշտակային առաքելութիւնը ոչ թէ ան-
կարելի կարծելու էք հեթանոսաբար, այլ գե-
րազանցապէս բարձր և դժուարին, կարօտ եր-
կնային ամենայաղթ ոյժի մը՝ ամբիժ և անարատ
պահուելու համար, զանձ մը՝ զոր ստացողը
պիտի տանի « յամանս խեցեղէն »: Առաքելա-
կան է պատգամը. « Տեսնեմ այլ օրէնս յան-
կամս իմ՝ հակառակ օրինաց մտաց իմոց, ո՞վ
ապրեցուցէ զիս ի մարմնոյ աստի մահու, բայց
շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի »:

Այս եւ ասոր պէս նուիրական փաստերէ
չազդուող մը մեզի կը յիշեցնէ ծիծաղաշարժ
օրինակը աղուէսին, որ որթատունկի մը վերեւ
փայլող խաղողի ողկոյզին հասնիլ չկարենալուն
համար՝ « խակ » է կ'ըսէ ու կ'անցնի կ'երթայ:

Գարձեալ « Կոչնակ » ի մէջ երեցող Կուսա-
կրօնութեան (կարգա կուսակրօններու) գայ-
թակղալի հատուածը առաջ յուզմունքով կար-
դացած էք եղեր. այդ իսկ կը մատնէ Ձեր ներ-
քինը. ճշմարիտ ու անկեղծ յուզումը՝ արդիւնք
սրտի և շիղերու զգայնութեան, շատ հեռի է
առաջ ըլլալէ, և այս վերադիրը կրնայ պատ-
շածիլ այն երեւոյթին՝ որ կեղծիք կ'ըսուի:

Հոս կ'արժէ անգամ մը եւս յիշել Ձեր հա-
մոզումներուն էն նշանակալիցը: Դուք կը պա-
հանջէք կուսակրօնութեան բարձումը՝ իբր պայ-

ման Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան, այնպէս
չէ: Այդ չի՞ նշանակեր միթէ օրէնքը շնչել՝ օրի-
նազանցներու հաճոյք ընելու համար, վերցնել
պետական ու հոգեւորական հսկողութիւնները,
փակել դատարանները և բանալ բանտերը՝ որ-
պէսզի ոճրագործներն ու անբարոյականները ա-
զատ համարձակ հետեւին իրենց անբանական
բնազդներուն: Տեսէք թէ ուր պիտի յանգի ձեր
նմաններուն հարած բարեկարգական մեթոդը:
Վերջացնելու համար՝ խօսքը կու տանք այն-
պիսի մէկու մը՝ որ իրաւունք ունէր իր տուած
դասը ձեզմէ առնելու:

« Սեռային բնազդին գործունէութիւնը զմեզ
առժամապէս անհաղորդ կ'ընէ Աստուծոյ հետ:
Այս պատճառաւ է որ գոյութիւն ունի Կուսա-
կրօնութիւնը, մշտապէս հաղորդ մնալու ուխտ
մ'ըլլալով Սրբոյն Աստուծոյ հետ: Դատար ա-
սիկա հակաբնական կը նկատեն, հետեւաբար՝
անգործադրելի. ուստի և մանաւանդ, ինչ որ
ահաւոր հետեւանք է, առաջնորդ կեղծիքի, մար-

դախաբութեան և աստուածաբութեան: Այս
էր տեսակէտը Լուսերի, Բողոքականութեան հի-
մնադրին, որ սերնդագործման տիրատուր բնագ-
ղը աւելի մեծ մեղք կը սեպէր քան պոռնկու-
թիւնն իսկ, և որուն համար ձգելով իր վանա-
կանի սքեմը՝ ամուսնացաւ: Այս տեսակէտը ան-
ընդունելի է անշուշտ: Սրբոյնքան մեջ աճու-
հոգեւոր կեանքի զբաղումն իսկ է և Աստուծոյ
փափաքը ու հրամանը: Կուսակրօն կեանքը
փրկչական քարոզութիւնն է և առաքելական
կրկնուած պատուէր, ոչ հանրական հրաման՝
այլ նախապատիւ շաւիղ... Պօղոս Առաքել
կ'ուզէ որ ամէնքն ալ՝ եթէ կրնան՝ իրեն պէս
ըլլան, այսինքն կուսակրօնութեան հետեւին,
« և անոնք որ կին ունին՝ այնպէս ըլլան որ-
պէս թէ չունին »: Այնպէս որ ամուսնացելոց
համար իսկ տեսակէտով մը կուսակրօնութեան
հրաման կայ քրիստոնէութեան մէջ »: (Հրեղէն
Արմ. Թ. 11, 12, էջ 972):

Հ. Թ. ԹՈՄՍԱՆՆ

“ LE FOYER, ” ՍԱՅԹԱՔՈՒՄԸ

« Le Foyer » թերթը իր փետրուարի թիւին մէջ արծազանգը տալու ատեն Գ. Ա. Սա-
ֆրաստեանի « Բազրատումիներու Ծագումը » քամախօսութեան, կը շեշտէ թէ ինչպէս Գ. Ա.
Ս. համոզիչ կերպով ի վեր հանած է թէ « ՅԱՇՏԻՇԱՍ (ոչ թէ ԱՇՏԻՇԱՍ, ինչպէս Վեմետիկե-
ցիները սխալմամբ տպած են 1829 իմ) պարթեական կամ արդի լեզուագէտներու համաձայն
պահլաւ ծագում ունի և կը նշանակէ ՅԱՇՏԻՇ, այսինքն ՊԱՇՏԱՄԱՆՑ ՏԵՂ »:

Փակագծուածը, որպէս « Le Foyer » ի խորհրդածութիւն, ամարդար է և անճիշտ, ինչ-
պէս նաեւ անփափականկատ խօսք:

Հիշեմ. բորմ. շուրջ այդ թուականին արդէն դրած է. « Յաշտ-ի-ից = Ձոն մանաւանդ հաշ-
տութեամբ. լծ. պ. աշտի = հաշտութիւն. և եւթթէ = մուէր, զոհ. լ. հօսդիա (hostia), զոհ,
Ֆէստում (festum) տօն, իբր յ. Ֆստա, տէստէ. (զրի և աշտ և Յաշտ. Յաշտից-տեղիք թա-
գաւորացն Հայոց մեծաց յաշտիշատ կամ աշտիշատ ճարոմոյ) »: Յետոյ կը շարունակէ դնել
յաշտ, յաշտ առնեմ, յաշտածին՝ ծնեալ ի յաշտ առնելոյ:

Ուրեմն սխալած չեն Վեմետիկեցիները. և արդի լեզուագէտներէն դարով առաջ քննիր,
մեկներ ու բացատրեր են՝ տարբերակներով համոզեց: Եւ այդ ամէնը միշտ մախմեաց մեզի
թողած յիշատակարաններու համեմատ ըրած են:

« Le Foyer » ի յօդուածագիրը թող հետեւի մեզի և տեսներ ՅԱՇՏԻՇԱՍ և ԱՇՏԻՇԱՍ
ծեւերը մախմեաց քով, թէ՛ վանքիս մատենադարանի քանի մը ձեռագիրներուն մէջ և թէ
հիմ ու հեղինակաւոր տպագրութեանց մէջ:

Խորհնացի Պատմ. Ա. Ձեռագիր. գր. 1650 իմ (բոլորգիր), ունի

Ա. Վ. Ի տարօն յիւրեանց գիւն յաշտիշատ - Բ. Վ. Ընտրեցին զփառնեւոհ ոմ յաշտիշատից
Տարօնոյ - Գ. Վ. Գտին զփեծն սահակ և զմեարոյ յաշտիշատ տարօնոյ - Դ. Վ. Հանգուցին (յ) յիւրեանց
գիւն աշտիշատ: (Ընտրու հմտ. տես. Խորհնացի. տպ. Վ. Կեսա, 1881, էջ 186, 428, 547, 568):

Եթէ ա. Վ. ը ՅԱՇՏԻՇԱՍ համարինք, չէ՞ որ Բ. և Գ. ի մէջ ստիպուած ենք մախմիլ ընդու-
նել Յ. և ամուլը ԱՇՏԻՇԱՍ և ոչ Յաշտիշատ, ինչպէս և Գ. Վ. ը որ պարզապէս Աշտիշատ է:

Առնենք Խոր. Պատմ. Բ. Ձեռագիր, գր. 1664 իմ, (ժողովրդի). ուր ա. Բ., Գ. Վ. Վայու-
թիւնները յար և մնան են Ա. Ձեռագիրն, իսկ Դ. Վ. ը է իսկապէս « հանգուցին (յ) յիւրեանց
գիւն ԱՇՏԻՇԱՍ »: Բոս ալ « Le Foyer » ի ուշադրութիւնը կը հրաւիրենք:

